ԼԱՏԻՆԱԿԱՆ GERUNDIUM-Ը ԵՎ SUPINUM-Ը ՀԱՅԵՐԵՆԻ ԼԱՏԻՆԱՏԻՊ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ
Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Մ. Մաշտոցի անվան Մատենադարան
Ավագ գիտաշխատող, բ. գ. թ.
tigran.sirunian@gmail.com
ՌԱՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Մ. Մաշտոցի անվան Մատենադարան
Գիտաշխատող
raysargsyan@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2026.1(34)-28

Համառոտագիր

Լատիներենի գոյականական դերբայներ *gerundium*-ը և *supinum*-ը թափանցել են հայերենի քերականություն ունիթոռական վարդապետ Հովի. Քռնեցու քերականական երկի միջոցով (14-րդ դ.)։ Այնուհետև *gerundium*-ի (մասամբ նաև՝ *supinum*-ի) հայերեն զուգահեռ ձևերը նկարագրել են 17-րդ դարի լատին և լատինաբան քերականները՝ Ֆրանցիկոս Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Ոսկան Երևանցի և Հովհաննես Հակոբ Կոստանդնուպոլսեցի (Հոլով)։

Հոդվածում քննության են առնվում *gerundium*-ի և *supinum*-ի կարգերը հայերենի լատինատիպ քերականություններում, պարզաբանվում են դրանց ըմբռնումը և կազմության սկզբունքները։ Անդրադարձ է արվում նաև *ջէրունդիական* և *սուփիննական* եզրույթների լատինական աղբյուրների հարցին։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *gerundium*-ը ընկալվել է որպես հայերենին բնականորեն հատուկ կարգ և կայուն կերպով արտացոլվել է բայական համակարգում։ Մինչդեռ *supinum*-ը չի կայունացել լատինատիպ քերականության մեջ. այն դրվագային, մեկուսացած միավոր է, որ մնացել է մեկ աշխատության սահմաններում, իսկ հետագայում, ճանաչվելով խորթ ձև, անտեսվել է։ Ուսումնասիրության տվյալների համադրմամբ պարզվում է, որ հայերենին վերագրված *gerundium*-ը ունի լիարժեք հարացույց, արտահայտվել է բոլոր թեք հոլովներով և դրանց նախդրիվ ձևերով։ Այն նաև լատինաբան հայերենին հատուկ իրողություն է, ենթարկվել է արհեստական կանոնավորումների, հատկապես կրավորական ձևերի հարացույցում։

* Ներկայացվել է՝ 11. 03.2026 թ., գրախոսվել է՝ 03. 06. 2026 թ.։

Հոդվածում նաև ցույց է տրվում, որ *ջէրունդիական* և *սուպինական* եզրույթները ուշ շրջանի կազմություններ չեն (13-րդ դ.), ինչպես ներկայացվել է նախկինում, ուստի և հավաստի չէ այդ հիմքով արված պնդումը, թե դրանք չէին կարող փոխառվել Պրիսցիանուսի աշխատությունից (6-րդ դ.):

Բանալի բառեր և բառակապակցություններ. լատինատիպ քերականություն, դերբայ, գերունդիում, սուպինում, Հովհաննես Քոնեցի, Ֆրանցիկոս Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Ոսկան Երևանցի, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի, Պրիսցիանուս:

THE LATIN GERUNDIUM AND SUPINUM IN THE LATINIZING GRAMMARS OF ARMENIAN

TIGRAN SIRUNYAN
Institute of Language after H. Acharyan,
Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
Senior researcher, PhD
tigran.sirunian@gmail.com
RAYA SARGSYAN
Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
Researcher
raysargsyan@gmail.com

Abstract

The Latin forms *gerundium* and *supinum* entered Armenian grammar through the grammatical work of the Unitorian scholar Yovhannēs K‘rnets‘i (14th c.). Later, the Armenian equivalents of the *gerundium* and, in part, those of the *supinum* were described by the Latin and Latinizing grammarians of the 17th century: Franciscus Rivola, Clemens Galanus, Oskan Erevants‘i, and Yovhannēs Holov Kostandnupolsets‘i.

The article examines the categories of the *gerundium* and the *supinum* in the Latinizing grammars of Armenian and clarifies their interpretation and principles of formation. It also discusses the issue of the Latin sources of the terms *ջէրունդիական* and *սուպինական* (*gerundial* and *supinal)*.

The study shows that the *gerundium* was regardedas a category naturally inherent to Armenian and was consistently reflected in the verbal system. By contrast, the *supinum* did not become established in the Latinizing grammar. It remained an episodic and isolated category, confined to a single work andhaving been regarded as an alien form, did not become the subject of further study.

A comparison of the data obtained in this studyshows that the *gerundium* ascribed to Armenian has a complete paradigm, including all oblique cases and their prepositional forms. It is also a phenomenon specific to Latinizing Armenian, having undergone artificial regularization, particularly in the paradigm of passive forms.

The article further shows that the terms *ջէրունդիական* and *սուպինական* are not late formations (13th c.), as as previously thought**.** Consequently, the claim made on this basis**,** that these terms could not have been borrowed from the work of Priscian (6th c.), cannot be regarded as valid.

Keywords and phrases: Latinizing grammar, participle, gerundium, supinum, Yovhannēs K‘rnets‘i, Franciscus Rivola, Clemens Galanus, Oskan Erevants‘i, Yovhannēs Holov Kostandnupolsets‘i, Priscian.

ЛАТИНСКИЕ GERUNDIUM И SUPINUM В ЛАТИНИЗИРУЮЩИХ ГРАММАТИКАХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ТИГРАН СИРУНЯН
Институт языка им. Р. Ачаряна
Матенадаран имени М. Маштоца
Старший научный сотрудник, к.ф.н.
tigran.sirunian@gmail.com
РАЯ САРГСЯН
Матенадаран имени М. Маштоца
Научный сотрудник
raysargsyan@gmail.com

Аннотация

Латинские отглагольные именные формы *gerundium* и *supinum* проникли в армянскую грамматику через грамматический труд униторского вардапета Иоанна Крнеци (XIV в.). В дальнейшем армянские соответствия *gerundium* (а отчасти и *supinum*) были описаны латинскими и латинизирующими грамматистами XVII века: Франциском Риволой, Клеменсом Галаносом, Осканом Ереванци и Ованнесом Акопом Оловом Константинопольским.

В статье рассматриваются категории *gerundium* и *supinum* в латинизирующи**х** грамматиках армянского языка, уточняются их понимание и принципы образования. Также затрагивается вопрос о латинских источниках терминов *ջէրունդիական* и *սուպինական* («герундиальный» и «супинальный»).

Исследование показывает, что *gerundium* воспринималось как категория, естественно присущая армянскому языку, и устойчиво отражалось в глагольной системе. Напротив, *supinum* не закрепилось в латинотипной грамматической традиции. Оно осталось эпизодическим и изолированным явлением, ограниченным рамками одного сочинения, а впоследствии, будучи признанным чуждым образованием, не стало предметом дальнейшего изучения.

Сопоставление данных исследования показывает, что приписываемое армянскому языку *gerundium* обладало полной парадигмой, включавшей все косвенные падежи и их предложные формы. Оно также представляет собой явление, характерное именно для латинизирующего армянского языка, поскольку подверглось искусственной регуляризации, особенно в парадигме страдательных форм.

В статье также показано, что термины *ջէրունդիական* и *սուպինական* не являются поздними образованиями (XIII в.), как это представлялось ранее. Следовательно, неубедительным представляется и основанное на этом утверждение о том, что эти термины не могли быть заимствованы из труда Присциана (VI в.).

Ключевые слова и словосочетания: латинотипная грамматика, причастие, *gerundium, supinum*, Ованес Крнеци, Франческо Ривола, Клемент Галан, Оскан Ереванци, Ованес Олов Константинопольский, Присциан.

Ներածություն

Լատիներենի քերականական կաղապարների ներթափանցումը գրաբարի քերականություն սկսվել է 14-րդ դարից, երբ բուն Հայաստանում հիմնվեցին ունիթոռական[1] կենտրոններ (Ծործոր, Քռնա) և լատինական (կաթոլիկ) միջավայրում ստեղծված գիտելիքը (աստվածաբանական, տրամաբանական, քերականական և այլն) յուրացնելու ուղղությամբ թարգմանական, մեկնողական վիթխարի աշխատանք կատարվեց[2]:

Լատիներեն բայի անդեմ *gerundium* և *supinum* կոչվող ձևերը թափանցել են հայերենի քերականություն ունիթոռական վարդապետ Հովի. Քռնեցու քերականական երկի միջոցով (14-րդ դ.), որով, ինչպես հայտնի է, սկզբնավորվում է լատինատիպ քերականությունների շրջանը[3], և որը հանդիսանում է լատինաբան հայերենի վաղ իրողությունների կարևորագույն աղբյուրներից մեկը [Hambardzumyan 2010: 109-110]:

Այս դերբայական ձևերը արտացոլվել և կայունացել են հետագա լատինատիպ քերականություններում (17-րդդ.), երբ գրաբարի լատինացված նկարագրությունը դարձյալ կաթոլիկ քերականների ջանքերով դարձավ համակարգված ուղղություն: *Gerundium*-ի (մասամբ նաև *supinum*-ի) հայերեն զուգահեռ ձևերը նկարագրել են 17-րդ դարի լատին և լատինաբան քերականները՝ Ֆրանցիկոս Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Ոսկան Երևանցի և Հովհաննես Հակոբ Կոստանդնուպոլսեցի (Հոլով):

Հայերենի քերականագիտության մեջ *gerundium*-ի և *supinum*-ի կարգերը քննության են առնվել հիմնականում երկու հայեցակետից՝ որևէ

[1] *Unitores*. միաբանողներ կամ միարարներ՝ բուն Հայաստանում և Կիլիկիայում կաթոլիկություն քարոզած լատին միսիոներների և նրանց հայ գործակիցների անվանումը:

[2] Հայալեզու ունիթոռական գրականության մասին տե՛ս Oudenrijn 1960: 73-243:

[3] Հովի. Քռնեցու քերականության լատինական աղբյուրների մասին տե՛ս Avagyan 1977: 53, 69 և այլն, Sirunyan 2017: 122-140, Muradyan 2025: 214-246, Cowe 2020: 91–121:

առանձին քերականության ուսումնասիրության սահմաններում (Գ. Ջահուկյան, Լ. Խաչիկյան, Ս. Ավագյան), լատինաբան հայերենի տեսության մեջ՝ որպես նրա ձևաբանական համակարգի տարբերակիչ հատկանիշներ (Վ. Համբարձումյան[4]):

Մեր խնդիրն է համապարփակ կերպով նկարագրել *gerundium*-ի և *supinum*-ի կարգերը հայերենի լատինատիպ քերականություններում, լատինական ավանդույթի հիմքով պարզաբանել դրանց ըմբռնումը, իմաստային առանձնահատկությունները և կազմության սկզբունքները. դերբայական այդ կարգերի ձևակերպումն ու կայացումը ամփոփել մեկ ամբողջական պատկերի մեջ: Կարևոր ենք համարում նաև քննել *ջէրունդիական* և *սուփիննական* եզրույթների լատինական աղբյուրների հարցը, որի վերաբերյալ նախկինում արված մեկնաբանության փաստարկները արժանահավատ չեն:

Ուսումնասիրության մեթոդներ

Այս ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք նկարագրական-վերլուծական և համեմատության մեթոդները:

Արդյունքներ

Անորոշ դերբայի հոլովված և նախդրավոր ձևերը ունիթոռական վարդապետ Հովհաննես Քռնեցին (14-րդ դ.) զետեղել է բայի աներևույթ եղանակի («կերպ») ներքո՝ պահպանելով դրանց լատինական անվանումները՝ *ջէրունդիական* և *սուփիննական* [K‘ṙnets‘i 1977: 178; նաև՝ Avagyan 1977: 83, 84]:

*Ջէրունդիական*ը, ինչպես լատինական *gerundium*-ը, գոյականական դերբայ է, արտահայտվում է անորոշ դերբայի թեքական ձևերով: Քռնեցին առանձնացրել է սրա երեք ձև. *սիրելո* = gen. *amandi*, dat. *amando*, *սիրելով* = abl. *amando*, *առ ի սիրել* = acc. *(ad)amandum* [K‘ṙnets‘i 1977: 178]:

Ինչպես նկատելի է. հարացույցից դուրս է թողնված բացառականը՝ *ի սիրելոյ* (լատինական *gerundium*-ի *ablativus*-ը՝ որպես ինքնուրույն հոլովաձև (առանց նախդրի), չունի բացառականի իմաստ (*amando* = abl. inst.

[4] Այս դերբայական ձևերից համապատասխանաբար երկու ձևաբանական հատկանիշ է դուրս բերվել՝ անորոշ դերբայի հոլովված, նախդրիվ ձևերի հատկացում *gerundium*-ին և ապա՝ *supinum*-ին [Hambardzumyan 2010: 158]: Մինչ այս ուսումնասիրությունը գերունդիական և սուպինական ձևերը քերականական լատինաբանությունների տեսության մեջ՝ իբրև առանձին դրսևորումներ, նկատի չեն առնվել, տե՛ս, օրինակ, Zarphanalean 1878: 32, 33, Acharyan 1951: 317:

/ modi), և գուցե Քոնեցին նկատի չի առել բուն հարացույցից դուրս՝ նախդրիվ ձևերը):

Գոյականական մյուս դերբայը՝ *սուփիննական*-ը, լատինական *supinum*-ի հետևողությամբ, տրված է երկու բայաձևով (հմմտ.՝ *supinum I*, *supinum II*, որոնք ներկայացնում են այս դերբայի երկու հոլովաձևերը՝ accusativus և ablativus, տե՛ս ստորև). *ի սիրել* = *supinum I*, acc. *amatum*, *ի սիրելո* = *supinum II*, abl. *amatu* [K‘ɔ̈nets‘i 1977: 178]:

Ընդ որում, քանի որ լատիներենում *gerundium*-ի acc.-ն և *supinum I*-ը (կրկին՝ acc.) իմաստային առնչություն ունեն, սովորաբար արտահայտում են գործողության նպատակ, Քոնեցին, ըստ երևույթին, ձևային համընկնումից խուսափելու համար սրանք տարբերակել է նախդիրների միջոցով (*առ ի սիրել* / *ի սիրել*):

Սուփիննական-ի երկրորդ ձևը՝ *ի սիրելո*, կազմված է լատինական կաղապարով՝ *ablativus*-ի նմանությամբ, սակայն ճշգրիտ չի արտահայտում սրա իմաստը (ածականից կախյալ, կրավորական (պասիվ) նշանակությամբ դերբայական ձև). *supinum II*-ին համարժեք կարող է լինել նախդրիվ հայցականը՝ *զուարճալի ինչ ի լսել* (= res jucunda aditu), *դժուարին ի գործել* (= difficile factu) [Hiwrmiwzean 1839: 99]:

Լ. Խաչիկյանը, մեկնաբանելով *ջէրունդիական* և *սուփիննական* եզրույթների ծագումը, գրում է, թե սրանց լատինական ձևերը՝ *gerundium* և *supinum*, սկսել են շրջանառվել 13-րդ դարում՝ լատին քերական Պրիսցիանուսի (6-րդ դ.) մեկնիչ Պետրոս Հելիուսի կողմից, և Քոնեցին թերևս ձեռքի տակ ունեցել է նաև այդ քերականի մեկնությունը[5]: Սակայն այս տեղեկությունը հավաստի չէ. Պրիսցիանուսը ոչ միայն բազմիցս հիշատակել է *gerundium* և *supinum* եզրույթները [Prisc. 1855: 173, 409-412, 452, 450…], այլև տվել է դրանց սահմանումները. «Gerundia quoque vel participialia, cum participiorum vel nominum videantur habere casus obliquos nec tempora significant, quod alienum est a verbo» («Գերունդիումները ևս կամ դերբայական ձևերը, քանի որ, ըստ երևույթին, ունեն դերբայների կամ անունների թեք հոլովներ և ցույց չեն տալիս ժամանակներ, ինչը

[5] Տե՛ս Khachikyan 1977: 47-48, նույն կարծիքն է հայտնել նաև Ս. Ավագյանը [Avagyan 1977: 83]: Լ. Խաչիկյանը այս վերլուծությունը կատարելիս հենվել է Ա. Չուդինովայի հաղորդած տվյալների վրա. «Названія gerundia, gerundiva, а также supina вводятся лишь со времени Петра Гелія и становятся общеупотребительными въ XIII веке…» [Чудинова 1871: 47]:

խորթ է բային») [Prisc. 1855: 409], «Supina vel participialia cum nec personas discernant et temporibus careant, quibus sine verbum esse non potest, et casus assumant et praepositionibus separatis adiungantur, sine dubio mihi nomina videntur esse, quae tamen loco infinitorum ponuntur tam activorum quam passivorum» («Սուպինները կամ դերբայական ձևերը, քանի որ չեն տարբերակում դեմքեր և զուրկ են ժամանակներից, առանց որոնց բայը չի կարող գոյություն ունենալ, և ընդունում են հոլովներ ու կապվում են առանձին նախդիրների հետ, անկասկած ինձ թվում են անուններ, որոնք, սակայն, գործածվում են անորոշների փոխարեն՝ թե՛ ներգործական և թե՛ կրավորական») [Prisc. 1855: 425][6]:

Ուստի Քռնեցին *ջէրունդիական* և *սուպինական* եզրույթները կարող էր փոխառած լինել անմիջապես Պրիսցիանուսից, հատկապես որ «Institutiones grammaticae»-ն («Հրահանգներ քերականության»)՝ լատին քերականի նշանավոր երկը, եղել է նրա գլխավոր աղբյուրներից[7]: Անշուշտ հավանական է նաև այլ աղբյուրի կամ աղբյուրների վարկածը: Հակված ենք նաև կարծելու, որ, գրավոր աղբյուրներից զատ, եղել են բանավոր ցուցումներ. ինչպես հայտնի է, Քռնայի հայ և լատին միաբանները թարգմանություններ կատարելիս համագործակցել են [Khachikyan 1977: 30-31, 39], նույնը ենթադրելի է Քռնեցու քերականության պարագայում. դրա հուշումը նշված եզրույթների *g-ջ*, *p-փ* տառադարձությունն է, որը, ըստ երևույթին, կատարվել է արտասանական հիմքով:

Իտալացի հայագետ Ֆր. Ռիվոլան (17-րդ դ. 1-ին կես) իր՝ լատիներենով գրված քերականության մեջ («Grammaticae Armenae libri quattuor») *gerundium*-ը դիտել է որպես հայերենին բնականորեն հատուկ կարգ՝ անորոշ եղանակի (infinitivus) ներքո: Նրա իմաստները, ըստ քերականի, պարփակված են անորոշ դերբայի հոլովական ձևերում. «Morem hunc esse apud Armenos, vt coniungant Infinitiuum cum quibusdam particulis, ex quarum coniunctione fit, vt varij gignantur dicendi modi perfimiles Gerundijs Latinorum» («Հայերի մոտ սովորություն կա անորոշ դերբայը կապակցելու որոշ մասնիկների հետ, որոնց միավորումից առաջանում են խոսքի զանազան ձևեր, որոնք շատ նման են լատիներենի գերունդիումներին»)

[6] Սրանք անշուշտ եվրոպական գիտությանը վաղուց հայտնի փաստեր են, օր.՝ «Gerundia saepe Priscianus dixit», «Sed frequentat v. supini usum Priscianus» [Weissenborn 1844: 8, 3] և այլն:
[7] Հովի. Քռնեցու քերականության լատինական աղբյուրների ուսումնասիրությունների վերաբերյալ տե՛ս վերևում՝ 3-րդ ծնթ.:

[Rivola 1624: 145-146]: Այդ հիմքով տրված են հետևյալ օրինակները. *առ ի գործել* (հայց.) = *ad operandum*, *գործելով* (գործ.) = *operando*, *գործելոյ* (սեռ.) = *operandi*:

Նաև՝ հայցական հոլովով նախդրավոր ձևեր՝ ժամանակային իմաստով.

ընդ գործել կամ *ի գործել-cum operaretur* (իմաստը փոխանցված է երկրորդական նախադասությամբ՝ «երբ գործում էր») [Rivola 1624: 146; նաև՝ Ĵahukyan 1974: 21]:

Supinum եզրույթը և դրան վերաբերող առանձին կանոններ Ռիվոլայի քերականության մեջ հիշատակված չեն:

Նույն շրջանի լատին քերական Կղ. Գալանոսի աշխատության մեջ *gerundium*-ը, լատինական կաղապարի հետևողությամբ, վերածված է համակարգային կանոնավոր միավորի: Գալանոսը ստեղծել է հասկացության հայկական անվանումը՝ «գործակալ» (ըստ երևույթին լատինական դերբայը օրինականացնելու նկատառումով), և այն դիտել է որպես բայական համակարգի առանձին ձև՝ դուրս բերելով անորոշ եղանակի կարգից[8]:

«Գործակալի» ձևերը զետեղված են 4 լծ. բայերի խոնարհման հարացույցներում.

1-ին լծ. (–ամ). *կարդալով* = clamando, *վասն կարդալոյ* = clamandi causa, *առ ի կարդալոյ* = ad clamandum, *ի կարդալոյ* = a clamando,

2-րդ լծ. (–եմ). *գովելով= laudando*, *վասն գովելոյ= laudandi causa*, *առ ի գովելոյ= ad laudandum*, *ի գովելոյ= a laudando*, և սրանց կրավորականը՝ *գովիլով, վասն գովիլոյ, առ ի գովիլոյ, ի գովիլոյ*, որոնց դիմաց, սակայն, տրված են իտալերենի զուգահեռ ձևերը՝ *col esser lodato, per esser lodato* և այլն (լատինական *gerundium*-ին կրավորականը հատուկ չէ),

3-րդ լծ. (–իմ). *Խօսելով = loquendo, վասն խօսելոյ = loquendi causa*, *առ ի խօսելոյ = ad loquendum*, *ի խօսելոյ = a loquendo*,

4-րդ լծ. (–ում). *ընթեռնլով=legendo*, *վասն ընթեռնլոյ = legendi causa*, *առ յընթեռնլոյ = ad legendum*, *ի յընթեռնլոյ = a legendo* [Galanos 1645:61, 72, 73, 80, 85, 86; նաև՝ Ĵahukyan 1974: 43-49]:

---

[8] Այս առնչությամբ Գ. Ջահուկյանը գրել է. «... սակայն փոխանակ իբրև այդպիսին դիտելու անորոշի հոլովաձևերը՝ [Գալանոսը] բավարարվում է լատիներենի *gerundium*-ի համապատասխան ձևերի տառացի թարգմանությամբ...» [Ĵahukyan 1974: 42]:

Ինչպես նկատելի է, դերբայական ձևերի այս շարքն ավելի ընգրկուն է, ներառում է բացառականով ձևը՝ *ի կարդալոյ* ևն (որը նախորդ քերականները չէին նշել), բացի այդ՝ ի հայտ է բերում կազմության որոշ առանձնահատկություններ՝ ad + acc: Կաղապարը (նպատակի իմաստով) արտահայտված է առ ի + տրական-ով (նախկինում՝ առ ի + հայցական), նաև՝ քանի որ լատիներենում *gerundium*-ը հաճախ պահանջում է *causa* կամ հոմանիշ՝ *gratia* կապերը, սեռական ձևը, լատինական կաղապարի համաձայն, տրված է կայուն կապակցությամբ (*վասն* + ...): Նկատելի է նաև, որ «գործակալի» կրավորական ձևերը արհեստականորեն միօրինականցվել են՝ հատկացվելով *–ի* լծորդությանը (հունաբանություն՝ կենսունակ նաև լատինաբան հայերենում [Muradyan 2010: 119-120; Hambardzumyan 2010: 153...][9]):

Գալանոսը այնուհետև բայի խոնարհման ձևերի տեսական մասում քննության է առել «գործակալի» կազմության սկզբունքները (տրված է 5-րդ կանոնի ներքո): Այսպես՝

1-ին, 2-րդ լծ. բայերի սահմանական ներկայի մասնիկների (-ամ, -եմ) վերջնահանգ *-մ*-ն փոխվում է *-լոյ*-ի (սեռ.) և *-լով*-ի (գործ.), 4-րդ լծ. բայերի *–ում* վերջավորությունը՝ նույնպես, 3-րդ լծ. բայերի *–իմ*-ը՝ *–ելոյ*-ի և *-ելով*-ի, օր.՝ *կարդամ–կարդալոյ, կարդալով, գովեմ–գովելոյ, գովելով, ընթեռնում–ընթեռնլոյ, ընթեռնլով, խօսիմ–խօսելոյ, խօսելով* [Galanos 1645: 97; նաև՝ J̌ahukyan 1974: 51-52]:

Գալանոսը ևս *supinum*-ի մասին առանձին տեղեկություններ չի տալիս:

Gerundium-ի հայերեն զուգահեռները կայուն միավորներ են նաև հայ քերական Ոսկան Երևանցու նկարագրած բայական համակարգում (17-րդ դ. 2-րդ կես): Այս դերբայը նա անվանել է տառադարձական տարբերակով՝ *ջերունդիա*, և նոր եզրույթով՝ *սերական* [Voskan 1666: 22; նաև՝ J̌ahukyan 1974: 75]: Այն, ինչպես Գալանոսի քերականության մեջ, դուրս է բերված աներևույթ եղանակի կարգից (նույնն է՝ անորոշ). «բաց ի սոցանէ (S.U.- եղանակներից) կայ ներ բայում ջերունդիա...» [Voskan 1666: 22]: Հարացույցը կազմված է 3 ձևից՝ gen., dat. *սիրելոյ*, abl. *սիրելով,* և acc., որը, ի տարբերություն նախորդ կաղապարների, ձևավորված է մեկ

[9] Հունաբան ավանդույթը մեծապես ազդել է լատինաբան հայերենի վրա՝ կազմելով նրա նկարագրի կարևոր մասը [Hambardzumyan 2010: 164-180]:

նախդրով՝ *ի սիրել* (*փխ* առ ի)։ Սակայն այս նախդրով կառույցը տրված է միայն տեսական մասում (կազմության սկզբունքների շարադրանքում՝ [Voskan 1666: 22]), մինչդեռ հոլովման համակարգից նախդիրը դուրս է թողնված (հավանաբար զուտ հոլովական ձևեր տալու նկատառումով)։

Ոսկանը նկարագրել է բայի խոնարհման տասը կարգ՝ ըստ նրա լծորդության և կազմության առանձնահատկությունների և սրանց ներքո (մեկ բացառությամբ՝ տե՛ս ստորև) «սերականի» զանազան օրինակներ է բերել. 1-ին կարգ՝ *-ել*-ով վերջացող ներգործական սեռի բայեր. *սիրել, սիրելոյ, սիրելով*, 2-րդ կարգ՝ *-ուլ*-ով վերջացող բայեր. *առնուլ, առնլոյ, առնլով*, 3-րդ կարգ՝ *-ալ*-ով վերջացող բայեր. *բառնալ, բառնալոյ, բառնալով*, 4-րդ կարգ՝ *-անել*-ով վերջացող բայեր. *հարկանել, հարկանելոյ, հարկանելով*, 5-րդ կարգ՝ տարարմատ (անկանոն) բայեր. *ուտել, ուտելոյ, ուտելով*, 6-րդ կարգ՝ տարարմատ բաղադրյալ բայեր. *ընդունիլ, ընդունելոյ, ընդունելով*, 7-րդ կարգ՝ «էական» բայեր. *ելոյ* կամ *ելոյր, ել, ելով*, 9-րդ կարգ՝ կրավորաձև բայեր. *մոռանալ, մոռանալոյ, մոռանալով*, 10-րդ կարգ՝ *–իլ*-ով վերջացող չեզոք սեռի բայեր. *լինիլ, լինելոյ, լինելով* [Voskan 1666: 76, 82, 87, 91, 95, 98, 101, 105, 109; նաև՝ J̌ahukyan 1974: 78, 79]։

Բացակայող 8-րդ կարգը վերաբերում է անկանոն բայերին, որոնք չունեն ներկա և անկատար ժամանակ՝ *ծանեայ* և այլն, և օրինաչափորեն չէր կարող ներառել դրանց կանոնավոր ձևերը՝ *ճանաչել* և այլն [Voskan 1666: 101-103]։

Ինչպես նկատելի է՝ *եմ* բայի համար բերված են արհեստական *ել, ելոյ* կամ *ելոյր*, *ելով* «սերականները»։ Սրանք հունաբան ավանդույթից լատինաբան հայերենին անցած ձևեր են, որ առաջ են եկել կամայական կանոնավորումների հետևանքով (բայի անկանոնության կրճատում կամ պակասավոր ձևերի ամբողջացում) [Muradyan 2010: 127-128; Hambardzumyan 2010: 159]. նույն շարքի լրացուցիչ *ելոյր*-ը ևս հունաբանություն է [Muradyan 2010: 106-107]։ Մյուս կողմից նկատելի է, որ «սերականները» կրավորականի հարացույց չունեն (ինչպես վերևում նշել ենք՝ լատինական *gerundium*-ին հատուկ չէ կրավորականը) և այդպիսով՝ ի տարբերություն բայական այլ ձևերի՝ զերծ են մնացել արհեստական միջամտություններից (ինչպես՝ «սեռանիշ» *ի* լծ. ներմուծումը)։

Supinum-ը Ոսկանն անվանում օտար *սուպինայ* եզրույթով՝ նկատելով, որ այն հայերենին խորթ դերբայ է. «Իսկ սուպինայ մեզ ոչ գոյ, կամ թէ սիրելոց, այս թէ յարմարեսցի» [Voskan 1666: 22]։ Այստեղ նկատի է

առնված *supinum I*-ը, որի իմաստը, սակայն, ապառնի դերբայը չի ծածկում (տե՛ս վերևում, նաև՝ J̌ahukyan 1974: 75):

17-րդ դարի նույն շրջանի քերական Հովի. Հակոբ Կոստանդնուպոլսեցու (Հոլով) աշխատության մեջ հայկական *gerundium*-ը ամբողջացել է որպես լատինաբան հայերենի իրողություն՝ իր մեջ առնելով բազմաթիվ արհեստականություններ:

Gerundium-ի համար քերականը տվել է «դերբայ» եզրույթը՝ նկատի առնելով նրա խառը բնույթը. «զի գոլով հոլովք բային աներևույթ, վարին փոխանակ բայից, և զառս էութեանց նշանակեն» [Kostandnupolsets'i 1674: 37; նաև՝ J̌ahukyan 1974: 106]:

«Դերբայի» ձևերը՝ ըստ Հոլովի բայական հարացույցի.

ա. «էական» բայեր. *ելոյ, գոլոյ, եղանելոյ, լինելոյ; ի յել, ի գոլ, ի յեղանիլ, ի լինիլ; ելով, գոլով, եղանելով, լինելով; նելն, ի գոլն, նեղանիլն, ըն լինիլն*;

բ. 1-ին, 2-րդ, 3-րդ լծ. ներգործական բայեր (–եմ, –ամ, –ում) և սրանց կրավորական ձևերը. *սիրելոյ, ի սիրել, սիրելով, ըն սիրելն* կամ *ի սիրելն / սիրիլոյ, ի սիրիլ, սիրիլով, ըն սիրիլն* կամ *ի սիրիլն; լուանալոյ, ի լուանալ, լուանալով, ըն լուանալն / լուանիլոյ, ի լուանիլ, լուանիլով, ըն լուանիլն*; *լնլոյ, ի լնուլ, լնլով, ըն լնուլն / լնանիլոյ, ի լնանիլ, լնանիլով, ըն լնանիլն*;

գ. 1-ին, 2-րդ, 3-րդ լծ. չեզոք բայեր, որոնցից 2-րդ լծ. բայերը տրված են երկու տեսակով՝ ներգործակերպ՝ *-ամ* և «ընդմիջակերպ»՝ *-անամ* (մասամբ ներգործաձև, մասամբ կրավորաձև բայեր), 3-րդ լծ. բայերը՝ միայն որպես «ընդմիջակերպ»՝ *-նում. ննջելոյ, ի ննջել, ննջելով, ըն ննջելն; գնալոյ, ի գնալ, գնալով, ըն գնալն / զայրանալոյ, ի զայրանալ, զայրանալով, ըն զայրանալն; զարթնլոյ, ի զարթնուլ, զարթնլով, ըն զարթնուլն;*

դ. «ձայնակրական» բայեր (կրավորակերպ չեզոք). *աճելոյ, ի յաճել, աճելով, ըն յաճիլն;*

ե. «հասարակ» բայեր (կրավորակերպ ներգործական). *խոսփովանելոյ, ի խոսփովանիլ, խոսփովանելովն, ըն խոսփովանիլն;*

զ. 1-ին, 2-րդ լծ. «դիմազուրկ» բայեր (միադիմի). *անձրևելոյ, ի յանձրևելոյ, նանձրևելն; որոփալոյ, յորոփալ, որոփալով, նորոփալն;*

է. «արտուղի» և պակասավոր 1-ին լծ. ներգործական բայեր և սրանց կրավորական ձևերը. *ուփելոյ, յուփել, ուփելով, ի յուփելն / ուփիլոյ, յուփիլ, ուփիլով, ըն յուփիլն; առնելոյ, ի առնել, առնելով, ըն առնելն / առնիլոյ, ի առնիլ, առնիլով, նառնիլն; լսելոյ, ի լսել, լսելով, ըն լսելն / լսիլոյ, ի լսիլ,*

լսիլով, ըն լսիլն; ճանաչելոյ, ի ճանաչել, ճանաչելով, ըն ճանաչելն / ճանաչիլոյ, ի ճանաչիլ, ճանաչիլով, ըն ճանաչիլն; տրելոյ, ի տրել, տրելով, ի տրելն / տրիլոյ, ի տրիլ, տրիլով, ըն տրիլն;

ը. «արտուղի» 1-ին լծ. «ընդմիջակերպ» չեզոք բայեր. *մեղանչելոյ, ի մեղանչել, մեղանչելով, ըն մեղանչելն; յառնելոյ, ի յառնել, յառնելով, ըն յառնելն*;

թ. «արտուղի» 2-րդ լծ. ներգործակերպ չեզոք և չեզոք բայեր. *գալոյ, ի գալ, գալով, ըն գալն; երթալոյ, յերթալ, երթալով, յերթալն; կարենալոյ* կամ *կարելոյ, ի կարել, կարելով, ըն կարելն*;

ժ. 3-րդ լծ. ներգործական բայ *կալնուլ* և սրա կրավորական ձևերը. *կալնլոյ, ի կալնուլ, կալնլով, ըն կալնուլն / կալանելոյ, ի կալանիլ, կալանելով, ըն կալանիլն;* և ևս երեք բայ՝ *ունիմ, ծանիմ, մատչիմ*, որոնք ընդհանուր հատկանիշով խմբավորված չեն, սակայն դերբայները հիմնականում ունեն սեռի նշումներ. «հասարակք»՝ *ունելոյ, յունիլ, ունելով, յունիլն; մատչելոյ, ի մատչիլ, մատչելով, ըն մատչիլն*; ներգործական՝ իր կրավորական ձևերով. ծանելոյ, *ի ծանել, ծանելով, ըն ծանելն / ծանիլոյ, ի ծանիլ, ի ծանիլով, ըն ծանիլն* [Kostandnupolsets'i 1674: 37, 40, 42, 45, 48, 52, 54, 58, 60, 63, 66, 68, 73, 75, 76, 79-81, 83, 85, 87, 89, 90, 92, 94, 95-97, 99, 102,105, 107-109; նաև՝ J̌ahukyan 1974: 104, 105]:

Ըստ այդմ՝ Հոլովը ճանաչել է «դերբայի» 4 ձև, որոնց մեջ տվել է նաև ներգոյականը՝ *ն, ըն* նախդրով հոդառու կազմություն՝ *նելն, ըն սիրելն*, նախդրիվ՝ in + ablativus կաղապարի համաձայն: Հոլովման լատինաբան համակարգի ներգոյականը, Վ. Համբարձումյանի բնորոշմամբ, «թերևս ամենացայտուն խորթությունն» է, որի ոչ միայն կաղապարն է օտար, այլև ձևույթներն են արհեստական [Hambardzumyan 2010: 271, նաև՝ 272-277]: Այս նախդիրները ևս՝ *ն/ըն*, այլև՝ *ին*, ինչպես նաև՝ հոդառու, այսպես կոչված՝ «գոյականացված» անորոշ դերբայը պատկանում են հունաբան ավանդույթին [Muradyan 2010: 111-113, 140-141]:

«Դերբայի» այլ արհեստական ձևեր. ա) հոլովման կարգի հատկացում «էական» բային՝ *ելոյ, գոլոյ* (տե՛ս Ոսկանի հարացույցի մեկնաբանությունը), բ) *ի* լծ. վերագրում կրավորականին՝ *լուանիլոյ* (տե՛ս Գալանոսի հարացույցի մեկնաբանությունը), գ) նույնպես նաև՝ *-ան-* մասնիկը կրավորականի ցուցիչ*ի* «սեռանիշի» հետ՝ *լնանիլոյ,* կամ առանց նրա՝ *կալանելոյ* [Hambardzumyan 2010: 271, նաև՝ 297, 298], դ) անկանոն բայերի

«կանոնավորմամբ» ստեղծված անսովոր կազմություններ՝ *տրելոյ, ծանելոյ* [J̌ahukyan 1974: 108; Hambardzumyan 2010: 304]:

Եզրակացություններ

1. Լատիներենի գոյականական դերբայ *gerundium*-ը արտացոլվել է հայերենի լատինատիպ քերականությունների վաղ շրջանում (14-րդ դ.), ապա կայունացել է նույն ուղղության հետագա երկերում (17-րդ դ.): *Gerundium*-ը համարվել է հայերենին բնականորեն հատուկ կարգ, և ըստ երևույթին այդ ընկալման ազդեցությամբ և նոր դերբայի հաստատումը դյուրացնելու համար ստեղծվել են մի քանի հայերեն եզրույթներ՝ «սերական», «գործակալ», «դերբայ»:

2. Այս դերբայի՝ քննության առնված հատկանիշները թույլ են տալիս պարզելու նրա ձևաբանական և իմաստային ընդհանուր նկարագիրը.

Հայց.՝ նախդրիվ. (1.) նպատակի նշանակություն, կրկնակի նախդիրներ՝ *առ ի* [Քռնեցի, Ռիվոլա], մեկ նախդիր՝ *ի* [Ոսկան, Հոլով]. *առ ի (ի) սիրել = ad amandum*; (2.) ժամանակի նշանակություն, *ի, ընդ* նախդիրներ [Ռիվոլա]. *ի (ընդ) սիրել= in amando*,

Սեռ. [Քռնեցի, Ռիվոլա, Ոսկան, Հոլով], նախադրությամբ [Գալանոս]. *(վասն) սիրելոյ = amandi*,

Տր.՝ նախդրիվ. նպատակի նշանակություն, կրկնակի նախդիրներ [Գալանոս]. *առ ի սիրելոյ = ad amandum;*

Բաց. [Գալանոս]. *ի սիրելոյ =ab / ex amando*,

Գործ. [Քռնեցի, Ռիվոլա, Գալանոս, Ոսկան, Հոլով]. *սիրելով= amando*:

Ներգ. *ն, ընն* նախդիր, հոդ [Հոլով]. *ընն սիրելն = in amando*:

Սրանք մեծապես ենթարկվել են արհեստական կանոնավորումների, որ հիմնականում արտահայտվել է կրավորական ձևերի նկարագրության մեջ: Ընդ որում՝ այս դերբայի կրավորականը բայական համակարգի միօրինականացման ուշագրավ օրինակ է, քանի որ շեղվում է ոչ միայն հայերենի իրողությունից, այլև լատինական կաղապարից (ուստի և զուգահեռ օրինակը բերվել էր իտալերենից):

3. Լատիներենի մյուս գոյականական դերբայը՝ *supinum*-ը, հայերենի լատինատիպ քերականության մեջ չի կայունացել, այն դրվագային, մեկուսացած միավոր է, որ մնացել է Քռնեցու աշխատության սահմաններում, իսկ հետագայում ճանաչվելով խորթ ձև՝ անտեսվել է:

4. *Ջէրունդիական* և *սուպհնական* եզրույթների՝ ուշ շրջանի իրողություն (13-րդ դ.) լինելու վերաբերյալ նախկինում բերված փաստարկը հավաստի չէ, ըստ այդմ՝ նաև հավաստի չէ այդ հիմքով արված պնդումը, թե դրանք չէին կարող փոխառվել Պրիսցիանուսի աշխատությունից (6-րդ դ.)։ Մինչդեռ հաշվի առնելով, որ այդ եզրույթներն առաջինը կիրառած Քռնեցին օգտվել է Պրիսցիանուսի աշխատությունից, հավանական է, որ դրանք անմիջապես փոխառված լինեն այդ աղբյուրից։

Գրականության ցանկ

[1] Acharʏan Hr., Hayocʿ lezvi patmutʿyun *[History of Armenian language]*. Vol. 2. Yerevan: Haypethrat, 1951.

[2] Avagyan S., Hovhannes Kʻrnetsʻu «Hamarot havaqumn yaghags kʻerakanin» erki kʻerakanagitakan nshanakutʻyuny *[The Grammatical Significance of Hovhannes Kʻrnetsʻi's "Brief Compilation on Grammar"]*. Introduction to Yovhannēs Kʻrnetsʻi, On the grammar. Yerevan: Armenian Academy of Sciences,1977: 52–153.

[3] Cowe P., The Role of Priscian's Institutiones Grammaticae in Informing Yovhannēs Kʻrnecʻi's Innovative Account of Armenian Grammar with regard to Terminology, Classification, and Organization with Special Focus on his Investigation of Syntax, in Revue des études arméniennes, 2020, 39: 91–121.

[4] Galanos Kgh., Kʻerakan ew tramabanakan neratsʻutʻiwn ar himastasirutʻiwnə shahelōy, *[Grammaticæ, et Logicæ Institutiones linguæ literalis Armenicæ Armenis traditæ]*. Rome: Ex Typographia Sacrae Congregationis de Propaganda Fide, 1645.

[5] Hambardzumyan V., Latinaban hayereni patmut'yun *[History of Latinizing Armenian]*. Yerevan: Nairi, 2010.

[6] Hiwrmiwzean Ed., Hamaʀot k'erakanut'iwn latin barbaʀoy*[A Brief Grammar of the Latin Language]*. Venice: 1839.

[7] Ɉahukyan G., Grabari k'erakanut'yan patmut'yun *[History of the grammar ofancient Armenian]*. Yerevan: Armenian State University Press, 1974.

[8] Khachikyan L., Kʀnayi hogevor-mshakutʻayin kentrony yev Hovhannes Kʻrnetsʻu gitakan gortsuneutʻyuny *[The religious and cultural center of Kʀna and thescholarly activities of Yovhannēs Kʻrnetsʻi]*. Introduction to Yovhannēs Kʻrnetsʻi,On the grammar. Yerevan: Armenian Academy of Sciences, 1977: 5–51.

[9] Kostandnupolsetsʻi Y., Ztutʻiwn haykabanutʻean kam kʻerakanutʻiwn haykakan *[Puritas linguae Armenicae]*. Rome: Ex Typographia Sacrae Congregationis de Propaganda Fide, 1674,

[10] Kʻrnetsʻi Y., Yaghags kʼerakanin *[On grammar]*. Yerevan: Armenian Academy of Sciences Press, 1977.

[11] Muradyan G., Fourteenth-Century Developments in Armenian Grammatical Theory through Borrowing and Translation: Contexts and Models of Yovhannes K‘rnets‘i’s Grammar Book, Hungarian Historical Review, 2025, 14, 2: 214-246.

[12] Muradyan G., Hunabantyunnery dasakan hayerenum*[Grecisms in Ancient Armenian]*. Yerevan: Nayiri, 2010.

[13] Oudenrijn M.-A. van den. Linguae haicanae scriptores ordinis praedicationisfratrum unitorum et ff. armenorum ord. S. Basilii citra mare consistentium quotquot huc usqueinnotuerunt. Bern: A. Francke Ag. Verlag, 1960.

[14]. Prisciani Institutionum Grammaticarum Libri I-XII, ed. Henrich Keil, M. Hertz, Leipzig: Teubner, 1855.

[15]. Rivola F., Grammaticae Armenae libri quattuor, Mediolani: Ex typographia Collegii Ambrosiani, 1624.

[16]. Sirunyan T.. Hovhannes K‘ṙnets'u k'erakanakan erki sahmanumneri latineren nakhorinaknery *[The Latin archetypes of the definitions in the grammatical work by Yovhannēs K‘ṙnets‘i]*. Banber Matenadarani, 2017, 24: 122–40.

[17] Voskan Erewants'i, K'erakanut'ean girk' *[Book of Grammar]*. Amsterdam: 1666.

[18] Weissenborn W., De gerundio et gerundive latinae linguae commentatio, Isenaci: 1844.

[19] Zarphanalean G., Patmut'yun hayeren dprut'eants'*[History of Armenian literature]*. Vol. 2, *Nor matenagr*t‘yun*[Modern literature]*. Venice: Mkhit‘arean, 1878.

[20] Чудинова А., Очерки изъ исторіи языкознанія. Развитіе грамматическихъ теорий въ средніе вѣка, Воронежъ: 1871.